

25. ԸՆԿԵՐԸ

Մին թաքավորը ունրան տղեն ասում ա.—Հունց մարթու քըզեռ հնգրեր կըճոկես, վըր հացան կտրելիս խրեգյը ինքյը յոր օնե, շատը քե թողե։ Հարը մըռնելան ետը տղան տունս ա կյամ, շատ տըեղեր շոռ կյամ, շատ մարթուց պըտահում, շատ պեներ տըեսնում, բայց ունրան հնգրեր. չի կարում քթենա։ Քյինամ ա, քյինամ, տըեսնում մին հինգյիսարանում էրկու հոգի մին մըեռալ թաղած տըեղան տունս կալած, ամեքյա մին մհակ եր կալած, վըեր ըն թակում։ Էտ տղան տահանց մուտանում ա, հրցընում, թա էտ մըեռած մարթը ծըեզ հինչ ա՞ ըրալ, խե յը՞ք տի անում։ Տահանք թա մըեզ փոդ ա իլա՛ պարտք, տուվալ չի։ Մինին հրցընում ա, թա քեզ հիշքան ա իլա՛ տալի, տա թա՝ հարունր մանեթ։ Տունս ա օնում տրան էրկուհարունր մանեթ տամ, էն մինին էլ հրցնում, թա քո՞նը հիշքան ա, տա թա՝ էրկուհարունր մանեթ։ Ջորսհարունր մանեթ էլ տրան ա տամ, անց կենում, քյինամ, տըեսնամ հղըցավը մին կնեգյ ունրան էրկու խուխրեն նհետ լաց ինիլավ քյինամ ա։ Հրցընում ա, թա մայրիկ, խե յը՞ս լաց ինունմ, էտ կնեգյը թա՝ պա վըեր ես լաց չի ինիմ, հո՞ւ լաց ինի, էն մըեռած մարթը, վըեր թաղած տըեղան տունս ըն կալալ կլխեն թակալ, իմ մարթս ա, մեհենգյ քու լունվոթունքտ գյունդունմ չըմ հո՞ւնց տըեղ տամ. մարթըս շատ հարուստ, լոթի-փոթի, օտոդ-խմոդեն մինեն ա իլա՛, քանի սաղ ար, պարտկու անում չի կար, հենց վըեր մըեռավ, ըստըեղաս-ընդրեղան պըրտկըտարեր տունս եկեն, լոխ էլ ունրան հնգրունքը. սոտ տըեղան պարտկեր ըն տիրալ վիզիս, կեսը տուվալ

ում, կնոջ կրծքացալ չում, որա հետե էլ խրեղմ մարթիս թաղած տրեղան տունս ըն օնում թակում, տինում տրեղը, ինձ էլ իսոի միշտ լիցցնում։ Թաքավրերեն տղան էտ կնգանը մին խիլլա փոդ ա տամ, ասում մնացած ռպարտկերբոռ կրտաս, ինքյը հղե ինում, քյինամ։

Մին քանի օր էլ վրեր քյինում ա, մին շատ քյասիբ մարթու վա պրտահում։ Բիրնդի վրեր հղե յրն ինգյում մին սաղ օր քյինամ, նզանում ըն, մին ըխպրու դրաղե նստում, վրեր դինչանան, հաց օտրեն, ճոր խմրեն։ Թաքավրերեն տղան հացը տունս ա օնում վրեր տինում, էտ քյասիբը հացան մին խրեգյ կտրում ա օտում, շատը թողում ուրան։ Թաքավրերեն տղան որա ծեռքան փոնում ա, ասում մեհենգյան տենը տու վրս իմ հոքուս հնգերը, էնքան տարն ամմեն տրեղ շոռ ըմ եկալ, վրեչ մին մարթ քզմընան չի իլալ։ Հորս կտակն ա, պիտի կատարեմ, վրեր հացեն խրեգյը տու վրս եր կալալ, շատը ինձետե թողալ, մենակ տո՞ւ կարող ըս իսկական հնգերը ինիս։ Էտ քյասիբը որան թա տու հարուստ մարթ ըս, ինձնըհետ հնգերոթուն չրս անել, քյինա՞ քզետե օրիշ հնգերը թթիս։ Թաքավրերեն տղան թա՝ չէ՞, զուր ըս տի պեն ասում, իմ իսկական հնգերը տու կարող ըս ինիս։ Էտ քյասիբը թա՝ հանա մոտեն, ինձնըհետ հնգերոթուն անողը ուրխոթունն էլ պիտի ինձնհետ կես անե, ցավն էլ, ես էլ ուրան մնան, ամմեն հինչ պիտի մաչ տրեղ տինինքյ, կես աննենքյ։ Թաքավրերեն տղան թա՝ հա, տի յել պիտի ինիս։ Վերջը, տահանք հնգերունք ըն տրեռնում։

Մին օր էտ քյասիբ տղան թաքավրերեն տղեն ասում ա.—Ըստրեղաս մոտե մին թաքավրերու ախճիգյ կա, ինքյը շատ դաշանգյ ա, հաբրուր տղու նհետ փսակված կինի, լոխճինին էլ կլխընեն ա մնացալ մին պրդվալում, քյինալ պիտիս էտ ըխճրկանը նհետ փսակվես։ Տա թա բալքի տու օգում ըս վրեր իմ կլոխրս էլ ինգյի էն մնացած կլխընքերեն մաչը։ Էտ քյասիբը թա քեզ վրեր ասում ըմ, ըրխըյին քյինա։

Թաքավրերեն տղան եր ա կենում, թուշ քյինամ էտ թաքավրերեն ըխճրկանը պալատը, նի մենում նրա օթաղը, տրեսնում ըխճրկանը պիրանավը մին օցու կլոխ տունս ա կյամ, վրեր բիդի ուրան մուտանա։ Տա ղամեն տունս ա օնում, թիսում կլոխը կտրում, ծիքյ տամ ջամղանկն էլ բուղազան տունս օնում, կտորում, թալա տամ, ըխճրկանը նհետ փսակվում։ Հնգերը կյամ ա, թա քու սաղ հարստությունտ էլ, կնգանըտ պեժինքյն էլ, կնեգյտ էլ պիտի ինձնհետ կես անես, լամ հնգերը տի յա ինում։ Տա լոխ մաչան կես

ա անում, վրեր պենը կյամ ա կնգանը հանում, գյուղում չի թա հի՞նչ անե։ Հնգբերը դաստին կլխու վա ինգյում, ասում.—Չէ՛, մզմըզամիլ, հնգրոթունը տի յա ինում, կնեգյըտ էլ պիտի կես անես։ Կնգանը տանում ըն էրկու ծառու զաթ, մին քյանդիր մին վրեննան ու մին կուռնան կապում հացընում մին ծառը, մին քյանդիր էլ էն մին վրեննան ու կուռնան կապում, ճոնդը էն մին ծառան կապում, վրեր ծիքյ ըն տում, թա մաշան կես աննն, ախճիգյը ծեկ ա անում, պիրանանվը փորան էրկու ծու վրեր քցում։ Էտ քյանիր տըզան թա՝ լավ, քյանդիրը կտրե, քեզ փուրցելի հետն էս պենն ըրե, վրեչ մին պենըտ էլ ինձ հարկավրեր չի, մեհեննգյ, վրեր ես կարող ըմ քզնըհետ հնգբրոթուն անեմ։

Քյանդիրը կտորում ըն, ըխճըկանն ըզադում, էտ էրկու ծուվանքն էլ փշրոտում, քյինամ տոն։